

ՀԱՅՐ ՆԵՐՍԷՍ ԱԿԻՆԵԱՆԻ ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐԸ

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ

Մխիթարեան միաբանութեան երեք հարիւրամեայ տարեկիցը հնարաւորութիւն է ընձեռում ակնածանքի ու գնահատանքի խօսք ուղղել հայագիտութեան այդ կենտրոնի երեւելի հայրերի հասցէին:

Հայր Ներսէս Ակինեանը (1883-1963) Մխիթարեանների վիեննական դպրոցի մեծաքանքար Հ. Յակոբոս Տաշեանը: Գաբրիէլ Մենեւիշեանը եւ, վերջապէս, նեանը, Հ. Գրիգորիս Գալեմքեարեանը, Հ. վայրում, ինչպիսիք են՝ Հ. Արսէն Այտըպիսի հզօր հայագէտ անհատների միջատաքրքրութիւնները ձեւաւորուել են այնռահուիրաներից է, որի գիտական հեՄխիթարեանների վիեննական դպրոցի

Ի սկզբանէ ընտրելով քրիստոնեայ հաւատի սպասաւորի կոչումը՝ նա 1895 Թ. ուսումնառում է Վիեննայի Մխիթարեան վարժարանում, որտեղ ստանում է հիմնաւոր գիտելիքներ աստուածաբանութիւնից, փիլիսոփայութիւնից, բանասիրութիւնից, լեզուաբանութիւնից, տիրապետում մի շարք լեզուների:

Քահանայի սքեմը հագնում է 1907 Թ. եւ դառնում միաբանութեան անդամ: Հ. Ն. Ակինեանի հայագիտական ապագայ բուռն գործունէութեանը մեծապէս նպաստել են միաբանութեան մատենադարանի «Հանդէս ամսօրեայ» (1909-1963) պաշտօնավարումները: Նապետի (1916-1920) եւ «Հանդէս ամսօ-

Վիեննայի Մխիթարեանների եւ այլ մատենադարաններում նա ուսումնասիրում է շուրջ 8000 ձեռագիր մատեան, որոնց ընձեռած նիւթը հիմք դարձաւ 500-ից աւելի գիտական աշխատութիւնների ստեղծմանը, որոնցից մօտ 50-ը մենագրութիւններ են, մնացեալը յօդուածներ, գրախօսականներ, մատենագիտութիւններ եւ այլն:

Բարձր գնահատելով Հ. Ներսէս Ակինեանի գիտական վաստակը՝ Վիեննայի համալսարանը 1954 Թ. դեկտեմբերի 1-ին նրան շնորհում է փիլիսոփայութեան պատուաւոր դոկտորի կոչում:

Հ. Ներսէս Ակինեանի պատմագիտական բազմաբնոյթ աշխատութիւններում իր ոչ մեծ, բայց կարեւոր տեղն են գրաւում հեղինակի վիմագրագիտական պրպտումները: Նա անձամբ չի զբաղուել հաւաքչութեամբ կամ նոր վիմագրերի հրապարակմամբ, սակայն գիտակ ու հասու է եղել հրապարակուած վիմական սկզբնաղբիւրներին եւ մի շարք աշխատութիւններում անդրադարձել է վիմագրագիտական խնդիրների քննութեանն ու լուսաբանմանը:

1931 Թ. Փարիզում ֆրանսերէն լեզուով, լոյս է տեսնում նշանաւոր հայագէտ Կարապետ Բասմաջեանի՝ Անիի, Բագնայրի եւ Մարմաշէնի արձանագրութիւնների ժողովածուն[1]: Այս հրապարակմանն անմիջապէս արձագանքում է մեծավաստակ հայագէտը «Հանդէս ամսօրեայում»՝ տպագրելով մի փոքր գրախօսական[2]:

Ակինեանը, քաջածանօթ լինելով այդ արձանագրութիւնների նախորդ հրատարակութիւններին՝ Մ. Բրոսէ, Ս. Ջալալեանց, Ա. Մխիթարեան, Ղ. Ալիշան, Կ. Կոստանեան եւ ուրիշներ, մատնանշում է Բասմաջեանի ժողովածուի դրական կողմերը. «Անշուշտ Բասմաջեանի տուած ընթերցուածները ունին նախորդներու վրայ ամէն առաւելութիւն: Գովելի է, որ իւր հրատարակութեան կցած է նաեւ կարեւորներու լուսանկարները»[3]: Գրախօսականի սկզբում նշելով նախորդ հեղինակ-

© National Library of Armenia

ների վերծանութիւններում առկայ սխալներն ու տարընթերցումները, որոնք «վրանքի մատնած էին ընթերցողները», եւ որ «ցանկալի էր միշտ ունենալ այս արձանագրութիւններու խղճամիտ արտագրութիւն մը, լաւ եւս լուսանկարով հրատարակութիւն»[4], հետագայ շարադրանքում ցաւ է յայտնում, որ «բանասիրական ճշդութիւն կը պակսի նաեւ հոս» եւ շարունակում. «Բ[ասմաջեան] իր խղճմտութեան հետ եղած է տեղ-տեղ ինքնավստահ լուծելու մէկ հարուածով հանգոյցներ, որոնք, սակայն, դեռ երկար պիտի յոգնեցնեն բանասէրները»[5]: Գրախօսը չի բաւարարւում այս ընդհանուր դիտողութիւններով: Ժողովածուից նա առանձնացնում է երկու վերծանութիւն, որոնցում, իր կարծիքով, առկայ են սխալներ:

Այդ վիմագրերից մէկը Անիի Մայր տաճարի արտաքուստ հարաւային պատի արեւմտեան անկիւնում փորագրուած Յոյց Կատրանիդէ թագուհու (Գագիկ Ա Բագրատունի թագաւորի (990-1020) կողակից) շինարարական վկայագիրն է[6]:

Արձանագրութիւնը պատմագիտական եւ վիմագրագիտական մեծ հետաքրքրութիւն ու արժէք է ներկայացնում: Այն Անիի Մայր տաճարի շինարարական անձնագիրն է: Վիմագիրն աչքի է ընկնում նաեւ թուագրման եղանակով: Օգտագործուած են վեց տարբեր թուականներ, որոնցից երեքը վերաբերում են տաճարի շինարարութեան աւարտին, երեքը՝ վկայագրի փորագրման ժամանակին:

Վիմագրի առաջին տողի վերջում փորագրուած են երեք փակագրեր: Գրաբարում Ակինեանը, որպէս սխալ վերծանութեան փաստ, մատնանշում է հէնց այս երեք փակագրերը, որոնց հաւասարի վերծանութեանը խոստանում է մանրամասն անդրադառնալ հետագայում:

Միւս վկայագիրը, որի վերծանութեան վերաբերեալ իր անհամաձայնութիւնն է յայտնում Ն. Ակինեանը, Անիի Պալատական եկեղեցու շինարարական արձանագրութիւնն է[7], մասնաւորապէս՝ նրա վերջին հատուածը, որը վիմագրագիտութեան մէջ տարակարծիք քննարկումների առարկայ է դարձել: Արձանագրութեան վերջում փորագրուած է՝ Ի ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱ: ՀԱ տառակապակցութիւնը Ն. Մառը, Գ. Յովսէփեանը, Կ. Բասմաջեանը համարել են թուական [71+551=662] եւ այն դիտել որպէս տառագիր թուականի վաղագոյն նմուշ: Այսօրինակ մեկնաբանութեան դէմ են արտայայտուել Յ. Օրբելին, Կ. Ղաֆադարեանը, Ա. Աբրահամեանը: Վերջիններս գտնում են, որ արձանագրութիւնը կիսատ է թողնուած, եւ որ ՀԱ տառերը ՀԱՅՈՑ բառի սկիզբն են:

Հ. Ներսէս Ակինեանի նշեալ գրախօսականին հետեւում է Կ. Բասմաջեանի «պատասխանը»[8]: Նկատելով, որ «աշխարհիս վրայ չը կայ գործ մը, որ քննադատութեան տակ չ'իյնայ»՝ նա, թերեւս ափսոսանքով, նշում է, որ «սխալ հիմերու վրայ հաստատուած քննադատութիւն մըն է կատարուածը»՝ նկատառելով Ակինեանի գրախօսականը: Այս խօսքերին հետեւում է կատրանիդէի արձանագրութեան վերոնշեալ փակագրերի նրա մեկնութիւնները. առաջին փակագիրը՝ ԲԵՆԻ, երկրորդը՝ ԱՄԻՆ, երրորդը՝ ԳՐԷ, այսինքն՝ ԲԵՆԻԱՄԻՆ ԳՐԷ: Ի պատասխան Ակինեանի միւս դիտողութեան, Բասմաջեանը փորձում է հիմնաւորել ՀԱ-ն որպէս թուական վերծանելու տեսակէտը:

Ամսագրի նոյն համարում տպագրւում է Ներսէս Ակինեանի հանգամանալից յօդուածը՝ նուիրուած այդ արձանագրութիւնների խնդրառու հարցերին[9]: Անդրադառնալով փակագրերի բաս-

մաջեանական վերծանութեանը՝ Ակինեանը գտնում է, որ՝ «Շատ միամիտ ըլլալու է կարծելու համար թէ փորագրողին ազատ կամքին է թողնուած պաշտօնական արձանագրութեան մը մէջ երկիցս իւր անունն անմահացնել»[10]. միանգամայն տրամաբանական հետեւութիւն: Մեծատրամաբանական նուն հայագէտը չի բաւարարւում խնդրի լուկ մերժումով: Քիչ ներքոյ նա ներկայացնում է փակագրերի վերծանութեան իր բանալին, ըստ որի այդ փակագրերը տաճարի շինարարութեան աւարտի թուագրման եւս մի տարբերակն են: Առաջին փակագիրը նա համարում է բուն (ընթերցումը՝ աջից ձախ), երկրորդ փակագիրը՝ ԱՄԻ, երրորդը՝ ՀԱԳԱՐԱՑԻՈՑ: Այս կապակցութեամբ Ակինեանը գրում է. «Փակագիրներն ալ առանց տարակուսի թուական մը կը ներկայացնեն..., որ է Հիճրէի 390 տարին եւ ճշդիւ կը համապատասխանէ նախորդ թուականներուն, այն է՝ 999, դեկտ. 12 - 1000, նոյ. 30»[11]:

Փակագրերը որպէս թուական դիտելու ակինեանական մօտեցումը, նկատառելով դրանց նախորդող երկու նոյնարժէք թուականները, իր հաստատումը գտաւ մերօրեայ մի շարք հեղինակների ուսումնասիրութիւններում[12]:

Բենէ գրիչը տաճարի շինարարութեան աւարտի եւ վկայագրի փորագրման ժամանակները փաստել է երկու խումբ համաժամանակեայ թուականներով, եւ Հ. Ներսէս Ակինեանը տոմարագիտական հմտալից վերլուծութեամբ ներկայացնում է նաեւ միւս թուականները:

Հայ վիմագրութեան մէջ առկայ են արձանագրութիւններ, որոնք բովանդակութեամբ եւ հնագրութեամբ տարաբնոյթ մեկնաբանութիւնների տեղիք են տուել: Այսօր էլ դժուար է դրանց վերծանութիւնները վերջնական ու լիարժէք համարել: Այդօրինակ վկայագրերից եւս երկուսը քննութեան առարկայ է դարձրել Հ. Ն. Ակինեանը:

Պատմագիտութեան մէջ միջնադարեան Հայաստանի նշանաւոր կրօնամշակութային կենտրոններից մէկի՝ Հաւուց Թառի վանքի հիմնադրման պատիւը վերագրուել է յայտնի ռազմաքաղաքական գործիչ, փիլոնական, Պահլաւունեաց տոհմի պայազատ Գրիգոր Մագիստրոսին (Վասակ Պահլաւունու որդի): Այս փաստն արձանագրելուն հիմք է հանդիսացել Գրիգոր Մագիստրոսի անունով մեզ հասած մի վկայագիր, որը, նկատի ունենալով ժամանակակից կամ ժամանակամերձ մատենագրական սկզբնաղբիւրների լռութիւնը, նրա կողմից Հաւուց Թառի վանքը հիմնադրելու կամ այնտեղ եկեղեցի կառուցելու իրողութիւնը հաստատող եզակի վկայութիւն է: Արձանագրութեան տարաբնոյթ մեկնաբանութիւնները պայմանաւորուած են մի շարք հանգամանքներով. արձանագրութեան բնագիրը չի պահպանուել, այն մեզ է հասել 18-րդ դարի ընդօրինակութեամբ, վիմագրի թուականը (1013 թ.) անյարիր է բովանդակութեանը[13]:

Արձանագրութեան քննախոյզ հրապարակումն իրականացրել է երջանկայիշատակ Գարեգին Յովսէփեանը[14]: Քննարկման անհրաժեշտութիւնից ելնելով՝ ներկայացնում ենք վիմագրի պահպանուած ընդօրինակութիւնը.

ԹՈՒԻՆ ՆԿԲ (1013), Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ԳԱԳԿԱ ԵՒ Ի ՀԱՑՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՍԱՐԳՍԻ, ԵՍ՝ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՎԵՐՍՏԻՆ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԾՆՈՂԱՑՆ ԻՄՈՑ ՆԱԵՒ Ի ՏԵՐԱՆՑ ԱՇԽԱՐՀԻՍ ԳԱՆՁԱԳԻՆ ԱՐԱՐԻ ՁՎԱՑՐՍ ՍՈՐԱ ԼԵՐԱՄԲՆ ԵՒ ԴԱՇՏԱՄԲՆ ԵՒ ԱՄԵՆԱՑՆ ԿԱՁՄՈՒԹԵԱՄԲՆ ՈՐ Ի ՍՄԱ, ՔԱՌԱ-

© National Library of Armenia

ԴԷՄԲ ՉՈՐՍ ԱՆԿԵԱՄԲ ՅԱՋԱՄԲ ԵՒ ԱՀԵԿԱՄԲ Ի ԴԻՄԱՑ ԵՒ Ի ԹԻԿԱՆՑ. ԵՒ ՏՈՒԱՔ ՅԻՇԱՏԱԿ ԱՆՋՆՋԵԼԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՎ ԵՒ ԱԾԽԱՐՀԱԿԱԼ ԹԱԳԱՒՈՐԻ ԹՂԹՈՎՆ ԵՒ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ԿՆՔՈՎՆ. ՀԱՍՏԱՏԵՑԱՔ ՁԵՌԱԳՐՈՎ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՒՆ. ԵՒ Ի ՆԱԻԱԿԱՏԻՍ ՏԱՃԱՐԻՍ, ՋՈՐ ՇԻՆԵՑԱՔ ԶՀԱՅՐԵՆԻՍ ՄԵՐ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑՍ՝ ՈՐ Է ՀԱՅՈՑ ԹԱՌ, ՀԱՆԳՍՏԱՐԱՆ ԵՒ ԱՒԹԱՐԱՆ ԱՆՁԵՌԱԳՈՐԾ ՍՈՒՐԲ ՊԱՏԿԵՐԻՆ ՅԻՍՈՒԻՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՐ Ի ՓԱՑՏԻՆ, ԽՆԴՐԵԼՈՑ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱԻԵՏԱՐԱՆՉԻՆ, ՀՐԱՄԱՆԱՒ ՄԱՒՐ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. ԵՒ ՆՈՐՈԳԵԱԼ ՀԱՍՏԱՏԵՑԱՔ ՎԵՐՍՏԻՆ ՋՍՈՒՐԲ ՈՒԽՏ ՎԵՐՋԻՆՍ ՔԱՆ ԶԱՌԱՋԻՆՆ. ԱՍՏ ԵՂԱՔ ԶՎԷՄՆ ՀԱՒԱՏՈՑ ՀԻՄԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ. ԳՐԻԳՈՐ ՎԱՀՐԱՄ ՊԱՏԱՆԻՆ[15]:

Արձանագրութեան մէջ հրատարակիչը տեսնում է միայն մէկ հակասութիւն, որն առնչւում է թուականին: Նա գտնում է, որ բնագիրը կարող էր փորագրուել 1044 թ. յետոյ, քանի որ Վասակ Պահլաւունու որդի Գրիգոր Բջնեցին «մագիստրոս» տիտղոսն ստացել է նշուած թուականից յետոյ: Թերեւս, ներքուստ կասկածելով արձանագրութեան բնագիր լինելու կապակցութեամբ, փորձելով հաւաստել վկայագրի վաւերականութիւնը՝ նա մատնանշում է երկու հանգամանք. վիմագրի բովանդակութիւնը որոշակի արտացոլում է գտել մերձակայ Գեղարդավանքի Պռօշ Խաղբակեանի 1283 թ. արձանագրութեան եւ 14-րդ դարի յայտնի տաղասաց Մանուէլ Բջնեցու «Ջորս ըստ պատկերի քում» շարականի մէջ[16].

Քանի որ ստորեւ խօսք է գնալու նաեւ Կեչառիսի վանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու հարաւային մուտքի ճակատակալին փորագրուած, բովանդակութեամբ նոյնպէս հակասական արձանագրութեան մասին, հարկ ենք համարում այն եւս ներկայացնել.

:Ն:Ջ:Բ: (1033) ԹՈՒԻՍ ՀԱՅՈՑ, Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵ/ԱՆ/ ԳԱԳԿԱ ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՆ/ ՍԱՐԳՍԻ, ԵՍ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ, ՈՐԴԻ ՀԱՍԱՆ/Ա ՇԻՆԷՑԻ ԶԷԿԷՂԷՑԻՍ ԻՆՁ Ի ԲԱՐԷԽՈՍՈՒԹՆ ԵՒ Ի/Մ ՊԱՏՐՈՆԻՆ ԵՒ Իմ ՈՐԴԵԱՑՆ. ՈՐՔ ԸՆԹԷՌՆՈՑՔ Ջ/ԻՍ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԷՑԷՔ Ի ՔՍ ԱՂԱՋԵՄ[17]:

Ինչպէս տեսնում ենք, արձանագրութեան թուականը չի համապատասխանում ո՛չ Գագիկ Ա թագաւորի, ո՛չ Սարգիս Սեւանցի կաթողիկոսի (992-1019) եւ ո՛չ էլ Գրիգոր Վասակեան Պահլաւունու մագիստրոսութեան ժամանակագրութեանը: Գ. Յովսէփեանը այս բացայայտ անհամապատասխանութիւնների հանգուցալուծումը տեսնում է գրչի կողմից թուականի փորագրման ժամանակ թոյլ տուած սխալի մէջ: Նա առաջարկում է ՆՁԲ-ի փոխարէն կարդալ ՆՄԲ (1003), ինչը, որքան էլ յարիր լինի նշուած գործիչների ժամանակագրութեանը, չի պարզում Գրիգոր Վասակեանի հանգամանքը:

Հաւուց Թառի եւ Կեչառիսի յիշեալ արձանագրութիւնների վիմագրագիտական քննութեանը Հ. Ն. Ակինեանը նուիրում է մի շահեկան յօդուած[18]:

Հ. Ն. Ակինեանի աղբիւրագիտական պրպտումները բացայայտում են 10-դարի վերջին եւ 11-ի սկզբներին գործած Պահլաւունեաց նոյնանուն մէկ այլ նշանաւոր իշխանի՝ ի դէմս Գրիգոր-Ապիրատ Մագիստրոսի, որը եւ հանդիսացել է Կեչառիսի տաճարի շինարար-մեկենասը: Նա իր եզրայանգումը հիմնաւորում է մատենագրական մի//շարք վկայութիւններով: Մխիթար Այրիվանեցին 1031-1045 թթ.

միջեւ յիշատակում է. «Ապիրատ իշխան ... շինեաց զկեչառուս...»[19]*: Վարդան Բարձրբերդցին կեչառիսի շինող համարում է Հասան Պահլաւունու որդի Ապիրատին՝ «Շինեաց զսուրբ ուխտս կեչառուս...»*[20]*: Սիմէոն Երեւանցին վանքի հիմնադրման մասին գրում է. «Նախայիմնադրման մասին գրում է. «Նախապէս հիմնաւորեցեալ ի թուոջն ՆԽԴ (995) յԱպիրատ իշխանէ»*[21]*: Ն. Ակինեանը, հիմնուելով Մատթէոս Ուռհայեցու հաղորդումների վրայ, Ապիրատ կամ Գրիգոր-Ապիրատ Հասանեանին համարում է Պահլաւունեաց մի ճիւղի՝ Ապիրատեան ներկայացուցիչ եւ գործունէութեան ժամանակաշրջանը մատնանշում է 1000-1021 թթ.: Ըստ Ն. Ակինեանի՝ Գրիգոր-Ապիրատը «մագիստրոս» տիտղոսն ստացել է 1001 թ., երբ բիւզանդական Բարսեղ Բ կայսրը (995-1025) ժամանել էր Հայաստան: Ուռհայեցին յիշատակում է նաեւ Ապիրատի Սարէ, Ապլջահապ եւ վասակ որդիներին: Վերջինս Գրիգոր Մագիստրոս Վասակեանի քրոջ ամուսինն էր:*

Հ. Ն. Ակինեանը, վճռելով, որ կեչառիսի արձանագրութեան մէջ խօսքը վերաբերում է Գրիգոր-Ապիրատին, համաձայնում է Գ. Յովսէփեանի թուագրական ճշգրտմանը[22]*:*

Եթէ Կեչառիսի արձանագրութեան պարագայում Ակինեանը խնդիր ունէր ճշտելու շինարար-իշխանի ինքնութիւնը եւ թուականը, ապա Հաւուց Թառի վկայագրի դէպքում՝ նա կասկածի տակ է դնում վիմագրի վաւերականութիւնը:

Նրա քննադատութեան սլաքն ուղղուած է Գ. Յովսէփեանին, որը, չնայած վիմագրում առկայ հակասութիւններին, այնուամենայնիւ, դրա հեղինակ համարում է Գրիգոր Մագիստրոս Վասակեանին, իսկ վիմագիրը՝ վաւերական: Ակինեանի հիմնական կռուանները հետեւեալն են.

«ա. Արձանագրութեան լեզուն եւ արտայայտման եղանակը չեն համապատասխանում ԺԱ դարու արձանագրական ընկալելակ ոճին:

բ. Կան հոն պատմական հակասութիւններ:

գ. Բացայայտ կը տեսնուի, որ հեղինակը ձգտի Հաւուց Թառի սեպհականութիւնը ցոյց տալ շրջակայ դաշտն ու լեռը:

դ. Ուշադրութիւն հրաւիրել կը նկրտի նոյն վանքին մէջ պահուած պատկերին վրայ, որուն հնութիւնը մինչեւ I դար կը հանէ:

ե. Շարականն «Ջորս ըստ պատկերի քում» աղերսի մէջ դնել կ'ուզէ Ամենափրկչին պատկերին հետ, իբրեւ երբեմն եկեղեցւոյն շինութեան նաւակատիքին»[23]*:*

*Հ. Ներսէս Ակինեանը այս փաստարկների հիման վրայ Հաւուց Թառի արձանագրութիւնը համարում է կեղծիք: Այնուհետեւ, մեկնաբանելով այս եզրայանգումը՝ նա գտնում է, որ վիմագրի կեղծողը ծանօթ է եղել Շարականին եւ կեչառիսի վանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ տաճարի հարաւային պատի 1054 թուականի ընդարձակ արձանագրութեանը, որտեղ, որպէս եկեղեցու շինող, նշուած է Գրիգոր Մագիստրոս Վասակեանը: Այս կարծիքին նա յանգում է՝ համադրելով կեչառիսի եւ Հաւուց Թառի արձանագրութիւնները Շարականի հետ: Հաւուց Թառի արձանագրութեան կապակցութեամբ Ակինեանը եւս մի թնջուկ է առաջադրում, թէ ինչ կարիք կար նշել բիւզանդական կայսեր թուականը, երբ երկրի տէրն էր Գագիկ Ա Բագրատունի թագաւորը: Իր նշած փաստերի քննութեան արդիւնքում մեծ հայագէտը գտնում է, որ արձանագրութեան ընդօրինակութեան կեղծողը Քուրդ Յովհաննէս կոչեցեալ անձն է, որը յայտնի է որպէս այդ ընդօ-

© National Library of Armenia

րինակութեան հեղինակ:

Հայր Ներսէս Ակինեանին համակարծիք է մեծանուն պատմաբան Նիկողայոս Ադոնցը: Նա Գ. Յովսէփեանի «Խաղբակեանք...» աշխատութեան երրորդ հատորի գրախօսականում (զետեղուած նոյն դրքում), խնդրոյ առարկայ վիմագրերը համարել է անհարազատ եւ անվաւեր[25]:

Մեր ուսումնասիրութիւնները՝ մի փոքր այլ տեսանկիւնով, ցոյց են տուել, որ Հաւուց Թառի արձանագրութեան ընդօրինակման հանգամանքները, նշուած Քուրդ Յովհաննէսի վերծանութեանը կից յիշատակարանում, հնարովի են: 18-րդ դարի 20-ական թուականներին, երբ, ըստ նոյն յիշատակարանի, մագիստրոսաշէն կառոյցն ամբողջովին կամ հիմնականում աւերուած էր 1679 թուականի երկրաշարժից, եւ ընդօրինակողը հնար չունէր այդ շինութեան «դուրս կոյս հարաւակողմն, ի վերայ լուսանցոյց պատուհանին» կարդալ վիմագիրը:

Անշուշտ, Հ. Ներսէս Ակինեանի վիմագրական պրպտումները սոյն դրուագներով չեն սահմանափակուում: Արճանագրութիւնները, որպէս պատմութեան արժանահաւատ սկզբնաղբիւրներ, օգտագործուած եւ քննարկուած են նրա մի շարք այլ աշխատութիւններում եւս: Լայն եւ խորը գիտելիքներն ու հետաքրքրութիւնները Ակինեանին հնար են տուել ներկայանալու ոչ միայն եւ ոչ այնքան վիմագրական տուեալների պարզ շարահիւսողի դերում, այլ ցուցաբերել է քննական մօտեցում՝ առաջ քաշելով հայագիտութեան մէջ արմատացած մի շարք տեսակէտների ու դրոյթների նոր մեկնաբանութիւններ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

2 *K. J. Basmadjian,* Les inscriptions arméniennes d'Ani, de Bagnair et de Marmachen, Paris, 1931:
3 «Հանդէս ամսօրեայ», 1931, թիւ 10-11, էջ 659-660:
4 Նոյն տեղում:
5 Նոյն տեղում:
6 Նոյն տեղում:
7 Դիւան հայ վիմագրութեան, պր. 1, կազմեց Ց. Օրբելի, Երեւան, 1966, էջ 35:
8 Նոյն տեղում, էջ 8
9 *Կ. Բասմաջեան,* Անիի արձանագրութեանցս առթիւ, «Հանդէս ամսօրեայ», 1932, 7-9, էջ 536-539
10 *Հ. Ներսէս Ակինեան,* Անիի Մայր եկեղեցւոյ եւ միջնաբերդի եկեղեցւոյ արձանագրութիւններու մասին, «Հանդէս ամսօրեայ», 1932, 7-9, էջ 540-541:
11 Նոյն տեղում, էջ 539:
12 Նոյն տեղում, էջ 540:
13 *Ս. Աւագեան,* Անիի Մայր տաճարի շինարարական արձանագրութեան տարեթուերը, - «Լրաբեր» (հաս. գիտ.), 1979, 11, էջ 70-77. Ռ. Վարդանեան, Անիի Մայր տաճարի արձանագրութեան համաժամանակեայ տարեթուերը, «Լրաբեր» (հաս. գիտ.), 2000, 1, էջ 54-69

Ս. Աւագեանը, սկզբունքօրէն համաձայնելով փակագրերը որպէս հիջրայի թուական դիտելու Ակինեանի թեզին, վերջինիս կողմից տուների վերծանութիւնը գտնում է ոչ համոզիչ, «քանի որ կցագրում Ց, Ղ գրեր չեն նշմարւում ո՛չ աջից ձախ, ո՛չ էլ հակառակ ընթերցումով, իսկ վերջին փակագրում էլ անհնար է ՀԱԳԱՐԱՑԻՈՑ բառը տեսնել» (*Ս. Աւագեան,* նշ. յօդուած, էջ 73): Ս. Աւագեանն անդրադառնում է նաեւ Ա. Գ. Աբրահամեանի մեկնաբանութիւններին: Ա. Աբրահամեանը առաջին փակագիրը կարդում է՝ ՆԲ, երկրորդը՝ ԱՄԻՆ, վերջինը՝ ԳԷԲՐ/ԳԱԲՐ/գեբր կամ գաբր-պարսկերէն՝ աճիւաւատ, հեթանոս (*Ա. Աբրահամեան,* Ժամանակագրական ճշտումներ, «Հանդէս ամսօրեայ», 1976, էջ 158): Ս. Աւագեանը հաւանական է գտնում երկրորդ եւ երրորդ փակագրերի արրահամեանական վերծանութիւնը՝ աճիւամոզիչ համարելով ՆԲ-ն (*Ս. Աւագեան,* նշ. յօդուած, էջ 73):

Խնդրոյ առարկայ արձանագրութեան համաժամանակեայ թուականներին առանձին յօդուածով անդրադարձել է նաեւ Պ. Մուրադեանը (Хронология систем летосчисленый по армянским источникам, - Грузинский хроникон, - Кавказ и Византия, Ереван, 1988, с. 61-71): Փակագրերի վերծանութեան հարցում նա համաձայնում է Կ. Բասմաջեանի՝ ԲԵՆԻԱՄԻՆ ԳՐԷ ընթերցմանը (*Պ. Մուրադեան,* նշ. յօդուած, էջ 64):

Ռ. Վարդանեանը առաջարկում է «առաջին փակագիրը կարդալ գլխիվայր շրջուած՝ ձախից աջ գրութեամբ: Այս դէպքում առկայ է ՑՂԳ [393]... Այլ խօսքով՝ փակագիրը վերծանւում է «ՑՂԳ [393] ամին գէբր», այսինքն՝ հիջրայի 393 թուական, որը համարժէք է 1002/3 թթ.» (*Ռ. Վարդանեան,* նշ. յօդուած, էջ 60): Ուշագրաւ են հեղինակի՝ միւս թուականների մեկնաբանութիւնները: Առաջին՝ «Ի ՆԾ [450] Թ ՀԱՑՈՑ»-ի կապակցութեամբ նա գտնում է, որ հայոց մեծ թուական 450-ին ժամանակակից տարեթիւն ստանալու համար, պէտք է գումարել ոչ թէ 551, ինչպէս վարուել են նախորդ հեղինակները, այլ 452՝ պէս վարուել են նախորդ հեղինակները, այլ 452՝ յարդիւնքում յանգելով 1002 թուականին (նշ. յօդուած, էջ 58): Երկրորդ՝ «ՄԺԹ Թ ՀՈՌՈՄՈՑ»-ը նա համարում է հռոմէական փոքր թուականը՝ մատնանշելով փորագրող գրչի թոյլ տուած երեք տարուայ սխալը, այսինքն՝ «ՄԺԹ թ[ուին] հռոմոց»-ը պէտք է սրբագրել «ՄԻՌ թ[ուին] հռոմոց» (222-ին գումարենք 780, կը ստանանք 1002 թուական), (նշ. յօդուած, էջ 60): Տոմարագիտական հաշուարկների շնորհիւ, երկրորդ խմբի թուականները նա յանգեցնում է 1009-ին այն համարելով արձանագրութեան փորագրման տարեթիւը, ըստ «Կաթողիկոսի հրամանով Անիի մայր տաճարի կառուցումն աւարտելու առիթով գրուած հրովարտակ» (նշ. յօդուած, էջ 69):

Վերջերս թուականների այս թնջուկին անդրադարձել է նաեւ Կ. Մաթեւոսեանը (Անի. Եկեղեցական կեանքը եւ ձեռագրական ժառանգութիւնը, Էջմիածին, 1997): Սկզբունքօրէն չմերժելով թուականների վերոբերեալ մեկնաբանութիւնները՝ նա ուշադրութիւն է հրաւիրում Ն. Մառի այն տեսակէտին, որ այս արձանագրութիւնը 12-13-րդ դարերի ընդօրինակութիւն է: Մեծանուն գիտնականն իր այս տեսակէտը հիմնաւորում է վիմագրի ճնագրական առանձնայատկութիւններով եւ 11-րդ դարին անյարիր վրացական (ՄԺԹ-րով եւ 11-րդ դարին անյարիր վրացական (ՄԺԹ Թ ՀՈՌՈՄՈՑ - Գ. Ս.) թուականի վկայմամբ (*Н. Марр,* Ани, Л.-М., 1934, с. 121):

Կ. Մաթեւոսեանը ոչ միայն ուշադրութիւն է հրաւիրում Ն. Մառի տեսակէտին, այլեւ համաձայնւում է դրան՝ առաջարկելով լրացուցիչ հիմնաւորումներ: Փաստելով 1064-1124 թթ. սելջուկների կողմից եկեղեցին մզկիթի վերածելու հանգամանքը՝ նա գտնում է, որ՝ «Դժուար թէ մզկիթի վերածուած եկեղեցու նոր տէրերը նրա պատին հանդուրժէին քրիստոնեայ թագուհու ու Հայոց կաթողիկոսի անունով կառոյցի եկեղեցի լինելը մատնանշող մեծադիր արձանագրութեան գոյութիւնը», եւ աւելացնում. «Կարծում ենք, որ Մայր տաճարի բուն շինարարական արձանագրութիւնը մասամբ կամ ամբողջովին ոչնչացուել է հէնց այդ ժամանակ, իսկ աւելի ուշ, երբ եկեղեցին կրկին անցել է քրիստոնեաներին, հիմնովին նորոգուել է (հաւանաբար Զաքարեանների ժամանակ), նրա պատին շարադրուել է հին արձանագրութեան բովանդակութիւնը» (*Կ. Մաթեւոսեան,* նշ. աշխ., էջ 339):

14 Արձանագրութեան վաւերականութեան խնդիրը քննարկել ենք մեր «Հաւուց թառի» հիմնադրման վկայագրի շուրջը («Լրաբեր» (հաս. գիտ.), 1988, 4, էջ 65-71) յօդուածում:
15 *Գարեգին Յովսէփեան,* Հաւուց թառի Ամենափրկիչը եւ նոյնանուն յուշարձաններ հայ արուեստի մէջ, Երուսաղէմ, 1937:
16 Նոյն տեղում, էջ 2
17 Նոյն տեղում:
18 *Գարեգին Յովսէփեան,* Խաղբակեանք կամ Պոօշեանք Հայոց պատմութեան մէջ, հտ. 3, Նիւեօրք, 1944, էջ 27:
19 *Հ. Ն. Ակինեան,* Գրիգոր Ապիրատ, որդի Հասանայ, Մագիստրոս (-1021), «Ակօս», 1945, 9, էջ 110-122:
20 Միխթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 97:
21 Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 97:
22 *Սիմէոն Երեւանցի,* Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 283:
23 ՀՀ կոտայքի մարզի Արզական գիւղի Ս. Ստեփանոս եկեղեցու մուտքի բարաւորի քարի վրայ պահպանուել է ուշագրաւ շինարարական արձանագրութիւն, որտեղ Գագիկ Ա թագաւորի եւ Սարգիս Սեւանցի կաթողիկոսի կողքին յիշատակուած է՝ ԳՐԻԳՈՐ ՀԱՑՈՑ ՄԱԳԻՍՏՐՈՍ: Վիմագիրը կրում է 1001 թ.: Կարծում ենք սա լուրջ փաստարկ է յօգուտ Ակինեանի վարկածի:
24 *Հ. Ն. Ակինեան,* Գրիգոր Ապիրատ..., էջ 118:
25 *Գ. Յովսէփեան,* Խաղբակեանք..., հտ. 3, էջ Ի:

© National Library of Armenia